

ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկատեսակի անվանումը	<<ՈՍԿԻ-ԲԼԵՍՍ>> (ոսկու գրավով և երաշխավորությամբ ապահովված)
Վարկի նպատակը	սպառողական
Պայմանները սահմանող մարմինը, որոշումը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Վարչության 11.07.2019թ-ի թիվ 117 որոշում
Պայմանների գործողության ժամկետը	15.07.2019-17.05.2021թ
Վարկի ձևակերպման վայրը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Գլխամասային գրասենյակ, <<Ալավերդյան>>, <<Նոր Նորք>>, <<Աջափնյակ>>, <<Սիսիան>> մասնաճյուղեր
Վարկի արժույթը	<< դրամ
Վարկի տրամադրման ձևը	միանվագ, կանխիկ
Վարկի նվազագույն գումարը	200.000 << դրամ
Մեկ փոխառուին տրամադրվող Վարկի առավելագույն գումարը	2.500.000 << դրամ (գրավի գրավադրման արժեքի մինչև 150%-ի չափով վարկի հավակնելու դեպքում) 1.800.000 << դրամ (գրավի գրավադրման արժեքի 151-200%-ի չափով վարկի հավակնելու դեպքում)
Վարկի առավելագույն ժամկետները	Մինչև 36 ամիս՝ 200.000 - 1.000.000 << դրամ գումարով վարկերի համար Մինչև 48 ամիս՝ 1.000.000 << դրամ գումարը գերազանցող վարկերի համար
Վարկի նվազագույն տարեկան անվանական տոկոսադրույքը	18 % Վերաֆինանսավորված (այլ վարկատուից տեղափոխված) վարկերի համար կարող է կիրառվել պայմաններով սահմանված տոկոսադրույքից 1%-ով ցածր տոկոսադրույք:
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքների միջակայքը	19,1 - 21,9%
Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակը	ԱՆՈՒՒՏԵՏԱՅԻՆ՝ վարկի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ գումարով վճարում
Վարկի մարման դադարի շրջան	կարող է նախատեսվել վարկի մայր գումարի մարման դադարի շրջան՝ մինչև 6 ամիս ժամկետով
Տոկոսագումարների հաշվարկման կարգը	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով
Անվանական տոկոսադրույքի փոփոխությունը	Վարկի անվանական տոկոսադրույքը մնում է անփոփոխ պայմանագրի գործողության ողջ ընթացքում
Վարկի տրամադրման համար ծառայության միանվագ վճարը	Տրամադրվող վարկի գումարի 0,5%-ի չափով, ոչ ավել 4.900 << դրամից
Ժամկետանց վարկի տոկոսադրույքը	տարեկան 24%
Ժամկետանց տոկոսագումարի տույժը	օրական 0,1%
Պարտքի գանձման հերթականությունը	Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար
Վարկի վաղաժամկետ մարումը	Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում: Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող ընկերության եկամուտը ձևավորող վճարները:

ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարկի ապահովման միջոցները	- Գրավ՝ ոսկյա իրեր, ձուլակտորներ, որոնք ընդունվում և գնահատվում են որպես ջարդոն, և - Ֆիզիկական անձանց երաշխավորություններ /սույն վարկատեսակի պայմաններին բավարարող/	
Վարկի գումար/գրավի գրավադրման առավելագույն արժեք հարաբերակցությունը	200%	
Ոսկու 1 (մեկ) գրամի գրավադրման արժեքները ըստ հարգերի /<< դրամ/	Ոսկու հարգ	Գրավադրման արժեքները
	500	10.250
	550	11.250
	560	16.250
	583	17.050
	750	21.650
	860	24.650
	900	25.650
	958	27.650
999	28.650	
Գրավադրման հետ կապված	բացակայում են	

ծախսերը	
---------	--

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հաճախորդի տարիքային սահմանափակումներ	18 տարեկանը լրացած ՀՀ քաղաքացիներ, որոնք բնակվում և հաշվառված են ՀՀ-ում: Վարկառուի տարիքը վարկի տրման օրվա դրությամբ չպետք է գերազանցի 68 տարեկանը:
Երաշխավորի պահանջ	-Վարկը պետք է ապահովված լինի առնվազն մեկ ֆիզիկական անձի երաշխավորությամբ: -Երաշխավորը չպետք է լինի վարկառուի ընտանիքի անդամ: Սույն պայմանների իմաստով Վարկառուի ընտանիքի անդամներ են համարվում Վարկառուի հետ ընդհանուր տնտեսություն վարող անձինք: -Երաշխավորը պետք է ունենա եկամտի աղբյուր կամ սեփականության (համասեփականության) իրավունքով իրեն պատկանող գույք:
Պահանջներ հաճախորդի և երաշխավորի վարկային պատմության, վարկունակության նկատմամբ	Գրավի գնահատված արժեքի մինչև 150%-ի չափով վարկի հավակնելու դեպքում՝ - Հաճախորդը պետք է ունենա եկամտի աղբյուր ԿԱՄ հաճախորդի <<Ֆայկո-Սքոր>>* միավորները չպետք է պակաս լինեն 520-ից: Գրավի գնահատված արժեքի 151-200%-ի չափով վարկի հավակնելու դեպքում՝ - Հաճախորդը պետք է ունենա եկամտի աղբյուր ԵՎ հաճախորդի <<Ֆայկո-Սքոր>> միավորները չպետք է պակաս լինեն 520-ից: -Վարկի տրամադրման օրվա դրությամբ հաճախորդի և երաշխավորի գործող վարկերն ու երաշխավորությունները պետք է դասակարգված լինեն որպես <<ստանդարտ>>, չպետք է լինեն ժամկետանց և չունենան ժամկետանց տոկոսագումարի և տույժի պարտք: - Հաճախորդի սպասարկվող և մարված վարկերը վերջին 12 ամսվա ընթացքում չպետք է դասակարգված լինեն <<ստանդարտ>> դասից ավելի խիստ դասով, իսկ ժամկետանց օրերի ընդհանուր քանակը վերջին 6 ամսում չպետք է գերազանցի 30 օրը: - Վարկի վերաֆինանսավորման դեպքում վերաֆինանսավորվող վարկը չպետք է դասակարգված լինի <<ստանդարտ>> դասից ավելի խիստ դասով, իսկ վարկի գծով ժամկետանց օրերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 30 օրը: * <<ՖԱՅԿՈ-ՍՔՈՐ>>-ը <<ԱՔՈԱ Քրեդիտ ռեփորթինգ>> ՓԲԸ Վարկային բյուրոյի կողմից տրամադրվող հաճախորդի վարկային ռիսկի /վարկարժանության/ թվային գնահատականն է:
Ապահովագրության պահանջ	Չի պահանջվում

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկի տրամադրման դրական գործոններ	- ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված պայմաններին ու պահանջներին - Ընկերության համար ընդունելի է հաճախորդի վարկային ծանրաբեռնվածությունը
Վարկի մերժման գործոններ	- ներկայացված հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին - հաճախորդը, Ընկերության կարծիքով, խիստ ծանրաբեռնված է վարկային և այլ անձանց նկատմամբ պարտավորություններով - վարկի իրական շահառուն այլ անձ է - որպես երաշխավոր հանդես եկող անձը ընդունելի չէ Ընկերության համար
Որոշում ընդունելու և վարկը տրամադրելու ժամկետներ	Վարկային հայտը /ներառյալ պահանջվող փաստաթղթերը/ ներկայացնելու օրվա ընթացքում
Հաճախորդի հետ հաղորդակցման կարգը	Հաճախորդի ընտրությամբ՝ էլ.փոստով, փոստով, Ընկերության գրասենյակում <i>Էլեկտրոնային եղանակով հաղորդակցումը ամենախարձարավերսն է: Այն հասանելի է հաճախորդին 24/7 ռեժիմով, գերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:</i>
Վարկի քաղվածքների (կրկնօրինակների), այլ տեղեկությունների տրամադրման կարգն ու ժամկետները	Վարկի քաղվածքները (կրկնօրինակները), այլ տեղեկությունները տրամադրվում են անվճար, մեկամսյա պարբերականությամբ, հաճախորդի նախընտրած եղանակով
Գրավը վերադարձնելու ժամկետ	Վարկի ամբողջական մարումից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում
Մտածելու ժամանակ	Վարկառուն իրավունք առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարելով վարկի օգտագործման համար տոկոսներ, հաշվարկված վարկային պայմանագրում նշված տարեկան փաստացի տոկոսադրույքով:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Անհրաժեշտ փաստաթղթեր	1.Հաճախորդի և երաշխավորի անձնագիր /նույնանկանացման քարտ/, հանրային ծառայությունների համարանիշ (սոց. քարտ), 2.Հաճախորդի եկամուտները հիմնավորող փաստաթղթեր/սահմանված դեպքերում/,
----------------------	---

	3.Երաշխավորի եկամուտները կամ սեփականությունը հիմնավորող փաստաթղթեր:
Ներկայացման կարգն ու ժամկետները	Վարկային հայտի ներկայացման հետ միաժամանակ
Այլ փաստաթղթեր	Ընկերությունը կարող է իր ներքին իրավական ակտերով և/կամ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ բանավոր տեղեկություններ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտոնություններ	Վերաֆինանսավորված (այլ վարկատուից տեղափոխված) վարկերի համար կարող է կիրառվել պայմաններով սահմանված տոկոսադրույքից 1%-ով ցածր տոկոսադրույք:
-----------------	--